և ի հիւսիսոյ ի հարաւ, քառակուսի ձեւով, սկսեալ ի բազկաց Կովկասու ցծովն Կասպից։ Ներքին ծայրն որոյ անտառախիտ և մացառապատ։

«Ստանոր ի քարշ ածին զերանելին Գրիգորիս և սոսկալի չարչարանօք կարճեցին ի կենաց. հրամանաւ Սանատրկոյ Աղուանից արքայի, որպէս թէ նա խորամանկութեամբ արքային Հայոց կարճել կամի զհինահարութիւնս ազգին և զաւազակութիւնս, զոր նոքա ի ձեռս բէրբէին յաշխարհէն Հայոց։

«Որպէս և ցայսօր ժամանակի աւանդութեամբ խօսին բընակիչք՝ նոյնպէս ցուցանեն նաեւ զտեղին, ուր կալան զսուրբն, և կապեցին և ուր ի քարշ ածին ընդ ագիս ձիոյ, և ուր եկաց մնաց մարմին երանելոյն յետ չարչարանացն։

«Ցեղի մարմնոյ երանելոյն յեղը միոյ վտակի հուպ ի ծովն Կասպից, ուրանօր կառուցեալ կայ մի փոքրիկ մատուռ, ի միջի որոյ քառակուսի տապան, որում առնեն զուխտաղրութիւն զենմամբ խոյոց և զուարակաց, նոյնպէս պատուեն զտեղին այն նաեւ մերձակայ Մահմետականք։

«Թէպէտ աշակերտք նորա բարձին աստի զմարմին երանելոյն և տարան ի փոքր Սիւնիս ի գիւղն Ամարաս, բայց տեղին այն պատուի ի բնակչաց ցայսօր ժամանակի"։

ՄՈԼԼԱ ԽԱԼԻԼ

«Ի մեծագիր գիւղ ի Վանեան գաշտի ըստ մեծի մասին անտառապատ, երկիրն բերրի և առատ և լի ամենայն բարութեամբ. օդն ծանր և ջուրն վատ յեղանակս ամուան. բնակիչք են Մահմետականք, տունք աւելի քան զհարիւր, լինի աստ տորոն, մէտաքս, բրինձ, բամպակ, եւայլն.

«Զպատճառ յարգանաց այնմ տապանի հարցի ցնոսա, իսկ նոքա պատասխանեալ ասեն թէ՝ չ'գիտեմք զանուն և զպատճառն, սակայն բազմիցս տեսեալ եմք վառի անդ ճրագ ի գիշերի, վասն որոյ երկուցեալ ի հրաշից՝ յարգեմք հանապազ զտեղին այն։

«Ի կողմն արեւմտից ի մէջ անտառախիտ թփոց գոյ ընդարձակ հանդստարան Հայոց ի վերայ որոց տապանագիրք։